# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐᲐՍᲢᲐᲜᲘ» (ՍᲐᲥᲐᲠᲗᲕᲔᲚᲝ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 41 - 42 (16742) ՇԱԲԱԹ 25 ՄԱՅԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

## ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ ԴԱՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ԵՐԲԵՔ ՉԽԱՄՐՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ




Վաղը՝ մայիսի 26-ին, Վրաստանը կնշի Պետական անկախության վերականգնման 101-րդ ամյակը:

1918 թվականի մայիսի 26, ժամը 16:50: Թիֆլիսի Գոլովինսկի (այսօր՝ Ռուսթավելու) պողոտայում, Կովկասի փոխարքայի նախկին նստավայր (այսօր՝ Սովորող երիտասարդության պալատ): Անդրկովկասյան սեյմի վերջին նիստը, որը հռչակեց Անդրկովկասյան ժողովրդավարական Դաշնային Հանրապետության լուծարումը: Նույն օրը այդ շենքում անցկացվեց Վրաստանի ազգային խորհրդի նիստը, որն ընդունեց անկախության հռչակագիրը:

1918 թվականի մայիսյան այդ օրը, տեւական ընդմիջումից հետո, վերականգնվեց 1801 թվականին ռուսական ցարի հրամանագրով վերացված վրաց պետականությունը: Սակայն, այդ Հանրապետությանը երկար կյանք չէր վիճակված: Եվ այսօր, պետական Նոր անկախության 28-րդ տարում, նշելով անկախության վերականգնման 101-րդ ամյակի օրը, երկիրը հույսով, վստահությամբ ու համոզվածությամբ է նայում ապագային, վաղվա օրվան:

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

## ԱԶԳ ԼԻՆԵԼՈՒ, ԱԶԳ ՄՆԱԼՈՒ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ



1918թ. մայիսի 28-ը հայոց պատմության շրջադարձային էջերից է: Այդ օրը հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Հայաստանը դարձավ միջազգային իրավունքի սուբյեկտ՝ մտնելով ինքնիշխան ազգերի համակեցության մեջ: Իսկ ամեն ինչ սկսվեց մայիսի 26-ին, երբ Անդրկովկասի սեյմի վերջին նիստում, երբ ընդունվեց որոշում սեյմի արձակման եւ Անդրկովկասի դաշնության կազմալուծման մասին:

Մայիսի 26-ի երեկոյան Հայոց ազգային խորհրդի նիստը, որն ի գիտություն ընդունեց մայիսի 26-ին Վրաստանի անկախություն հռչակումը, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում, Արամյանցի տանը, Ազգային խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության մասին վճիռը:

Այսպիսով, մայիսի 28-ը դարձավ Պետական անկախության վերականգնման օր: Եվ այն վերականգնվեց գրեթե 600-ամյա ընդմիջումից հետո: Այն յուրովի ամրացվեց Սարդարապատի հաղթանակով, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերով, դառնալով ազգ լինելու եւ ազգ մնալու իրավունքի խորհրդանի, հռչակագրի:

### ԵՐԿԻՐԸ ՏՈՆՈՒՄ Է ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 101 - ԱՄՅԱԿԸ

Մայիսի 26-ին, համայն Վրաստանը տոնում է Վրաստանի ժողովրդավարական հանրապետության հռչակման 101-րդ տարեդարձը:

Այդ օրը, հիմնական տոնական միջոցառումները կանցկացվեն Թբիլիսիում, Ազատության հրապարակում եւ Ռուսթավելու պողոտայում: Ստեղծված ավանդույթի համաձայն, Անկախության օրը կանցկացվի նորակոչիկների երդմնակալության արարողությունը: Տոնի առիթով, Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից կանցկացվեն ցուցահանդեսներ, մշակութային-կրթական միջոցառումներ՝ կցուցադրվեն ներկայացումներ, կտրվեն համերգներ:

Տոնական միջոցառումներ են ծրագրված նաեւ Վրաստանի տարբեր երկրամասերում, այդ թվում՝ Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում:

### Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ

Մայիսի 28-ին Համայն հայությունը կնշի Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 101-րդ տարին:

Թբիլիսիում, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում, շնորհավորանքի խոսքով հանդես կգա Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, այնուհետեւ կցուցադրվի վավերագրական ֆիլմ եւ կկայանա համերգ:

Իսկ մինչ այդ, ժամը 17:30-ին Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցում, երեկոյան ժամերգությունից հետո, կկատարվի Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի մասնակցությամբ Հանրապետական մաղթանք:

Հասցեն՝ Արմազի փող. 18

МИДЖАНКЯВАЛ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՐԻՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

*Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց մայիսի 19-ին անցկացված միջանկյալ ընտրությունների արդյունքները: Հիշեցնենք, որ այդ օրը Թբիլիսիի Մթածմինդայի ընտրատարածքում անցկացվեցին խորհրդարանի պատգամավորի, իսկ Զուգդիդիում, Մառնեուլիում, Ճիաթուրայում, Ձեստափոնիում եւ Խուլոյում քաղաքապետի ընտրություններ: Եվս 8 մունիցիպալիտետներում՝ Սագարեջոյում, Ադիգենիում, Ախմետայում, Ձեստափոնիում, Ճիաթուրայում, Տղիբուլիում, Ծղալտուբոյում եւ Օզուրգեթիում անցկացվեցին նաեւ տեղական սակրեբուլոների մեծամասնական պատգամավորների ընտրությունները:*

Ըստ ԿԸՀ հաղորդագրության, մայիսի 19-ին ընտրությունները անցկացվել են հիմնականում խաղաղ պայմաններում: Ժամանակին բացվել են վերոնշյալ ընտրատարածքներում գործող 410 ընտրատեղամասերը, որոնցում գրանցված էր 402 091 ընտրող:

Հիշեցնենք, որ Մթածմինդայում միջանկյալ ընտրությունների անցկացման անհրաժեշտություն եղավ, երբ այդ շրջանից մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրված Սալոմե Զուրաբիշվիլին անցած տարեվերջին տեղի ունեցած ընտրությունների արդյունքում զբաղեցրեց Վրաստանի նախագահի պաշտոնը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿ

## ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ՄԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ «ՔԱՐԹՈՒ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻԱՆԱԼԻ ՕՐԻՆԱԿ Է»

*Մայիսի 24-ին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, «Քարթու» հիմնադրամի ղեկավար Նիկա Չխետիանու հետ, այցելեց «Հավլաբար» թաղամասում մեր հին թատրոնի տարածքում կառուցվող Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոնի նոր շենքի շինարարության հրապարակ եւ ծանոթացավ շինարարության ընթացքին:*



- 2020 թվականին Թբիլիսիի հայկական թատրոնի շինարարությունը կավարտվի,-շինհրապարակում հայտարարեց մայրաքաղաքի քաղաքապետը եւ հավելեց.

- Կարելի է ասել, որ հայկական թատրոնը հիմքից է կառուցվում, քանի որ հին շենքը այնպիսի վիճակում էր, որ վերանորոգման ենթակա չէր:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐԴԱՏՈՆ - 2019

## ՍԻՐՈ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԵՐԳԻՉԸ

*Մայիսի 19-ին Թբիլիսին կրկին իր խոնարհումը բերեց Մեծն Սայաթ-Նովային: Ավանդաբար, Մեյդան թաղամասում, Սուրբ Գեւորգ եկեղեցու հարակից Գորգասալու հրապարակում, արդեն 105-րդ անգամ անցկացվեց Մեծ գուսանին նվիրված ավանդական Վարդատոնը:*



Վարդատոնին հանդիսավոր մասում ելույթ ունեցան Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի տեղակալ Լիա Գիգաուրին, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վիրահայոց թեմի Ախալցիխեի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու եւ շրջանի հոգեւոր տեսուչ Հակոբ աբեղա Սահակյանը, Վրաստանի գրողների միության համանախագահ Բաղաթեր Արաբուլին, Վրացահայերի միության ղեկավար Մարի Առաքելովան:

Տոնի շրջանակներում՝ Վախթանգ Գորգասալու հրապարակում՝ Սայաթ-Նովայի հուշակոթողի մոտ ցուցադրվեցին թբիլիսցի գեղանկարիչների՝ Սայաթ-Նովային նվիրված գործերը: Ապա տիկնիկագործ Արմեն Հովհաննիսյանը եւ Երեւանի «Էլմար» ստուդիայի ուսանողները ներկայացրին Սայաթ-Նովային նվիրված տիկնիկային եւ թատերական ներկայացումներ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՆՈՐ ՕԲՅԵԿՏ

# ԱՐԵՎԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Մայիսի 21-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն մասնակցեց Քութայիսիում արեւի վահանակների արտադրության Վրաստանում առաջին գործարանի բացման արարողությանը:*

Իր խոսքում Բախտաձեն, ընդգծելով գործարանի արտադրական նոր օբյեկտի բացման գործում օտարերկրյա ներդրման դերը, նշեց, որ երկրի համար օտարերկրյա կապիտալի ներկրումը վիթխարի նշանակություն ունի:

- Մենք կողմնորոշված ենք բարձր տեխնոլոգիական արտադրությունների հիմնմանը, այնպիսի արտադրությունների, որոնք ունեն արտահանման ներուժ, որոնք թույլ կտան՝ Վրաստանն իր տեղը զբաղեցնի բարձր տեխնոլոգիական արտադրանք թողարկող երկրների շարքում,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Գործարանը հիմնվել է գերմանական «Այսոլար» ընկերության աջակցությամբ: Նորաբաց գործարանում աշխատելու է 300 մարդ:

- Մենք ազգային գաղափար ունենք, դա կրթությունն է: Կրթությունն ու տնտեսությունը միասին կզարգացնեն երկիրը: Մի քանի շաբաթից Քութայիսիում կմեկնարկի նաեւ էլեկտրական ավտոմեքենաների գործարանի կառուցումը,- ասաց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ առաջիկա օրերին երկրում կսկսվի եւս մեկ նշանակալից արտադրության շինարարություն, եւ դա կլինի Քութայիսիում առաջին էլեկտրամոբիլների գործարանը, որի նմանը չկա ողջ տարածաշրջանում:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՎԼԱԴԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿԻՆ ՍՏԱՆՁՆԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ

*Մայիսի 20-ին, 41-ամյա Վլադիմիր Զելենսկին, որը ապրիլի 21-ի նախագահական ընտրությունների երկրորդ փուլում հաղթել էր ձայների 73,18 տոկոսով, ստանձնեց Ուկրաինայի նախագահի պաշտոնը: Ուկրաինայի ժողովրդին երդմնակալության հանդիսավոր արարողությունը կայացավ Գերագույն ռադայի նիստում:*

*Վլադիմիր Զելենսկուն հանձնվեցին իշխանության խորհրդանշանները՝ գայիսոնը, Ուկրաինայի նախագահի կրծքանշանը եւ դրոշմակնիքը, իսկ ԿԸՀ-ի ղեկավար Տատյանա Սլիպաչուկը Զելենսկուն հանձնեց պետության ղեկավարի վկայականը:*

ԻՐԱՆ

## ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

*Իրանը հրաժարվեց բանակցություններ վարել Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ: Այդ մասին հայտարարեց երկրի նախագահ Հասան Ռոուհանին:*

*Մինչ այդ, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել էր, որ Վաշինգտոնը չի փորձում բանակցություններ սկսել Իրանի հետ, սակայն եթե Իրանը պատրաստ է բանակցությունների համար, ապա պաշտոնական Թեհրանը կդիմի Վաշինգտոնին:*

*Նշենք, որ ԱՄՆ եւ Իրանի միջեւ հարաբերությունները լարվեցին այն բանից հետո, երբ Դոնալդ Թրամփը հայտարարեց Իրանի միջուկային հարցով ձեւակերպած համաձայնությունը լքելու մասին, որից հետո կրկին գործի են դրվել համաձայնությամբ վերացված պատժամիջոցները:*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

## ՎԱՐՉԱՊԵՏԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ

*Մայիսի 24-ին Թերեզա Մեյը հայտարարեց, որ որոշում է ընդունել հունիսի 7-ին Մեծ Բրիտանիայում իշխող Պահպանողական կուսակցության առաջնորդի, հետեւաբար՝ նաեւ վարչապետի պաշտոնը թողնելու մասին:*

*Դա նշանակում է, որ Թերեզա Մեյը պետք է թողնի նաեւ երկրի վարչապետի պաշտոնը: Նոր ղեկավարի ընտրությունների գործընթացը կսկսվի հունիսի 7-ից հետո:*

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿ

# ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ՄԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ «ՔԱՐԹՈՒ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻԱՆԱԼԻ ՕՐԻՆԱԿ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կախա Կալաձեն շնորհակալություն հայտնեց «Քարթու» բարեգործական հիմնադրամին, որի ֆինանսավորմամբ էլ իրականացվում են Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շինարարության-վերականգնման աշխատանքները:

- Այս նախագիծը ֆինանսավորում է Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամը: Մայրաքաղաքում կավելանա եւս մեկ գրավիչ կենտրոն եւ բարեկեցիկ տարածք: Դա հիանալի նվեր է: Նման նախագծերը ողջունելի են: Ցանկանում եմ իմ երախտիքը հայտնել «Քարթու» հիմնադրամին համագործակցության համար: Սա «Քարթու» հիմնադրամի եւ քաղաքապետարանի համագործակցության հիանալի օրինակ է,- ասաց Թբիլիսիի քաղաքապետը:



Շինհրապարակում Թբիլիսիի քաղաքապետին բացատրություններ տվեցին «Քարթու» հիմնադրամի ղեկավար Նիկա Չխետիանին, Թբիլիսիի սակրեբուլոյի Իսանիից մեծամասնական պատգամավոր Իլիա Ջիշկարիանին, Իսանիի մունիցիպալիտետի վարչության նախագահ Կախա Լաբուչիձեն, Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը եւ թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրովան:

Շինհրապարակում Կախա Կալաձեն հանդիպում եւ զրույց ունեցավ այդտեղ հավաքված թատրոնի երկրպագուների հետ: Զրույցի ժամանակ քաղաքապետը սպառիչ պատասխաններ տվեց հավաքվածներին հետաքրքրող հարցերին՝ կապված հիմնականում թատրոնի շինարարության հետ:

Հիշեցնենք, որ Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության 2017 թվականի նախագծի համաձայն, ընթանում էին հայկական թատրոնի շենքի վերանորոգման-վերականգնման աշխատանքներ, սակայն հիմքը եւ պատերը մերկացնելուց հետո պարզվեց, որ շենքը վթարային վիճակում է, ինչը հաստատվեց նաեւ փորձաքննության ազգային բյուրոյի եզրահանգմամբ: Ելնելով դրանից՝ մշակվեց նոր նախագիծ, ըստ որի, նախատեսվեց 6403 քառակուսի մետր տարածքով նոր շենքի կառուցում:

Նոր շենքը հաշվի է առնված 607 հանդիսատեսի համար: Նախագծի ընդհանուր կանխատեսումային արժեքը կազմում է 18 միլիոն լարի:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2020 թվականին:



Այսպիսին կլինի մեր թատրոնի դահլիճը

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Մայիսի 23-ին Երեւանում Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն հանդիպում ունեցավ Հայաստանի տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Տիգրան Խաչատրյանի հետ:*

Հանդիպմանը կողմերն ընդգծեցին համատեղ նպատակուղղված գործողությունների իրականացման կարեւորությունը այն ոլորտներում, որոնք ազդում են ազգաբնակչության բարեկեցության վրա, քննարկեցին առաջիկայում սպասվող տնտեսական միջոցառումների եւ հանդիպումների շրջանակը: Մասնավորապես քննարկվեցին առաջիկա վրացհայկական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստի օրակարգին առնչվող հարցեր: Կողմերն անդրադարձան նաեւ վրաց-հայկական գործարարների համաժողովի կազմակերպչական հարցերին:

ՀԱՐՑՈՒՄ

# ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԼՈՒՐՋ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

***Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (National Democratic Institute, NDI) եւ Կովկասյան հետազոտությունների ռեսուրսների կենտրոնները (The Caucasus Research Resource Centers, CRRC) հրապարակեցին մարտի 28-ից ապրիլի 15-ն իրենց կողմից անցկացված սոցիալական հարցման արդյունքները: Հարցման կազմակերպիչների հավաստմամբ, Վրաստանի ողջ տարածքում, պատահական ընտրության սկզբունքով, հարցման է ենթարկվել 2,927 մարդ: Սխալվելու շեմը +/- 2-3% է:***

ՆՆՇՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑ

Հարցման արդյունքներով, Վրաստանի քաղաքացիների 77 տոկոսն աջակցում է երկրի կառավարության եվրոպական ձգտումներին, միայն 13 տոկոսն է բացասաբար արձագանքել այն հարցին, թե նրանց համար ընդունելի՞ է կառավարության նպատակը հասնել ԵՄ-ին Վրաստանի անդամակցությանը: 10%-ը դժվարացել է պատասխանել:

ԱՎԵԼԱՑԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԺԳՈՀՆԵՐԻ ԹԻՎԸ

«Ազգային դեմոկրատական ինստիտուտի» (NDI) ուսումնասիրության արդյունքների համաձայն, հարցման մասնակիցների մեծամասնությունը բացասական է գնահատում Վրաստանի կառավարության գործունեությունը: Հարցին, թե ինչպե՞ս դուք կգնահատեիք ներկայիս կառավարության գործունեությունը, քաղաքացիների 56 տոկոսը պատասխանել է՝ «վատ»: 36 տոկոսը դրական է գնահատում, 6 տոկոսը չգիտի այդ հարցի պատասխանը, իսկ 1 տոկոսը հրաժարվել է պատասխանել: Նշենք, որ 2018 թվականի դեկտեմբերին անցկացված հարցման արդյունքների համաձայն, Վրաստանի կառավարության գործունեությունը «վատ» էր գնահատել հարցվածների 53 տոկոսը, 44 տոկոսը գնահատել էր՝ «լավ», իսկ նույն թվականի մարտի արդյունքներով, «վատ» էր գնահատել 49 տոկոսը, իսկ «լավ»՝ 45 տոկոսը:

ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ՝ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի՝ NDI-ի հետազոտության համաձայն, Վրաստանի ողջ տարածքում հարցված բնակչության մեծամասնությունը գործազուրկ է: Հիմնախնդիրն առաջնահերթային է երկրի բնակչության համար: «Համարո՞ւմ եք արդյոք, որ աշխատանք ունեք» հարցին 41 տոկոսը պատասխանել է «այո» աշխատում է, իսկ 59 տոկոսը՝ «ոչ»:

Ինչ վերաբերում է մայրաքաղաքի բնակչությանը, այստեղ 46 տոկոսն ունի աշխատանք, 54 տոկոսը գործազուրկ է:

Հարցման արդյունքներով, գործազրկության մակարդակը երկրի միջինից բարձր է ազգային փոքրամասնություններով հոծաբնակ շրջաններում: Այսպես, հայաբնակ շրջանների բնակչության միայն 25 տոկոսն ունի աշխատանք, 73 տոկոսը գործազուրկ է: Ադրբեջանցիներով բնակեցված շրջաններում բնակչության 32 տոկոսն աշխատում է, 68-ը՝ ոչ:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ-ՏՆՕՐԵՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարիչ-տնօրեն Քրիստին Լագարդը:*

Այցի շրջանակներում, միջազգային ֆինանսական կազմակերպության ղեկավարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի, Վրաստանի Ազգային բանկի տնօրեն Կոբա Գվենետաձեի, ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանու հետ: Այցի ավարտին, Քրիստին Լագարդը հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու հետ:

Հանդիպման ավարտին Վրաստանի նախագահը հայտարարեց, որ իրենք հնարավորություն են ունեցել զրուցելու Վրաստանի ֆինանսական եւ ֆիսկալ առաջընթացի ու բազմաթիվ ոլորտներում երկրի հաջող բարեփոխումների մասին:

Ավելացնենք, որ, պաշտոնական հանդիպումներից բացի, Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարիչը հանդիպել է ուսանողների, երիտասարդ արտադրողների եւ առաջնորդ կանանց հետ: Լագարդը այցելել է նաեւ Մցխեթա, որտեղ դիտել է Ջվարիի եւ Սվետիցխովելու տաճարները:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԱՏԱՎՃԻՌԸ ՄՆԱՑ ՈՒԺԻ ՄԵՋ

*Մայիսի 22-ին Վրաստանի Գլխավոր դատախազության կողմից տարածված հաղորդագրության մեջ նշված է, որ Վրաստանի Գերագույն դատարանը չի բավարարել նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու պաշտպանության հայցը Թբիլիսիի վերաքննիչ դատարանի «Վրաստանի միացյալ բանկի» աշխատակից Սանդրո Գիրգվլիանու սպանության գործով երեք տարվա բանտարկություն նախատեսող դատավճիռը չեղարկելու մասին:*

«Վրաստանի Գերագույն դատարանի 2019 թվականի մայիսի 21-ի վճռի համաձայն, Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու եւ նրա փաստաբանի վճռաբեկ բողոքը Թբիլիսիի վերաքննիչ դատարանի 2018 թվականի հուլիսի 18-ի վճռի առնչությամբ բավարարված չէ»,- ասված է հայտարարության մեջ: Վրաստանի Գլխավոր դատախազությունը 2014 թվականին Սաակաշվիլուն հեռակա կարգով առաջադրել է մեղադրանքներ մի քանի քրեական գործերով. անձնական կարիքների համար պետական միջոցների վատնում, 2007 թվականի նոյեմբերի 7-ի ակցիայի ցրման գործում պաշտոնեական լիազորությունների վերազանցում, խորհրդարանի պատգամավոր Գելաշվիլուն ծեծի ենթարկում եւ 2006 թվականին Գիրգվլիանու սպանություն:



### ԱՐԴԵՆ ԳՐԱՆՑՎԵԼ Է 11150 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ

*Մայիսի 21-ի դրությամբ, առաջին-դասարանցիների համընդհանուր գրանցման շրջանակներում, Վրաստանի հանրային դպրոցներում գրանցվել է 11 150 երեխա:*

*Համընդհանուր գրանցումը կշարունակվի հունիսի 12-ը՝ ներառյալ:*

*Հիշեցնենք, որ առաջին փուլի շրջանակներում դպրոցներում գրանցվեցին այն երեխաները, որոնց քույրը կամ եղբայրը սովորում է նույն դպրոցում, կամ ծնողը նույն դպրոցի աշխատակից է:*

*Փաստաթղթերը պետք է ներկայացնել հունիսի 13-21-ը:*

*Գրանցումն իրականացվում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք-էջում՝ www.emis.ge:*

### ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀՈՒԼԻՍԻՆ

*Վրաստանի Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տեղեկատվությամբ, այս պահի դրությամբ, ավելի քան 20 000 պրակտիկոս ուսուցիչ է գրանցվել կարգավիճակը բարձրացնելու համար, իսկ ուսուցիչ դառնալու համար գրանցվածների թիվը 5000 է:*

*Ուսուցիչների եւ ուսուցիչ դառնալու ցանկություն ունեցողների քննությունները կսկսվեն հուլիսին, գրանցման փուլի ավարտից հետո միայն կորոշվի՝ քննությունները դիմորդների հետ միասին անցկացնե՞լ, թե՞ առանձին:*

*Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի վերլուծաբան Մայա Ինասարիձեի խոսքով, այս տարի մանկավարժներին կարգավիճակ ձեռք բերելու վերջին հնարավորությունն է տրվում, քանի որ հաջորդ տարվանից պրակտիկոս ուսուցչի կարգավիճակ ունեցող մանկավարժը հազվադեպ դեպքերում (ուսուցչի բացակայությունից խուսափելու համար) պայմանագրով կշարունակի դպրոցում աշխատել:*

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

## ՓՈԽԱԴԱՐՁ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՀԱՆԳԵՑՐԻՆ ՓՈԽԶԻՋՄԱՆ. ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՁԳՎԵՑԻՆ

*Վերջին մի քանի օրերի ընթացքում, Աբխազիայի ինքնահռչակ հանրապետության մայրաքաղաք Սուխումիում անցկացվում էին բազմահազարանոց բողոքի ցույցեր:*

Ակցիայի մասնակիցները պահանջում էին հետաձգել ընտրությունների օրը, քանի որ ընդդիմությունից նախագահի պաշտոնի հիմնական թեկնածու Ասլան Բժանիան ծանր վիճակում հոսպիտալացվել էր Մոսկվայում: Նրա հարազատները եւ գործընկերները գտնում են, որ Բժանիային կարող էին թունավորել: Իսկ բողոքի անժամկետ ակցիան պայմանավորված էր նրանով, որ իշխանությունները հրաժարվում էին նախագահի ընտրությունները հետաձգել մինչեւ աշուն:

Իր հերթին, Աբխազիայի ինքնահռչակ հանրապետության նախագահ Ռաուլ Խաջիմբան մայիսի 21-ին հայտարարեց, որ ընդդիմության ներկայացուցիչների գործողությունները վկայում են իշխանությունը զավթելու փորձերի մասին: Նա բնակչության զսպվածության, զգոնության կոչ արեց:

Հաջորդ օրը, իր հերթական ուղերձում Ռաուլ Խաջիմբան հավաստեց, որ ընդդիմությանն առաջարկել է պետության ղեկավարի ընտրությունները հուլիսից տեղափոխել օգոստոսի վերջ: Նա առաջարկում է դրանք նշանակել օգոստոսի 25-ին: Ավելի վաղ, ընդդիմության ներկայացուցիչները հայտնեցին, որ պետության ղեկավարի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ընտրությունները հուլիսի 21-ից օգոստոսի 26-ը տեղափոխելու շուրջ: Այդ հարցի վերաբերյալ երկրի խորհրդարանը որոշումն ընդունեց մայիսի 22-ին:

Պայմանավորվածության ձեռքբերումը հաստատեց նաեւ «Միասնական Աբխազիա» ընդդիմադիր կուսակցության նախագահ, բանակցությունների մասնակից Սերգեյ Շամբան:

Հիշեցնենք, որ ընդդիմության թեկնածու Ասլան Բժանիան արդեն նախագահի պաշտոնի համար իր թեկնածությունը քվեարկության էր դրել 2014 թվականին, սակայն տանուլ է տվել հանրապետության ներկայիս ղեկավար Ռաուլ Խաջիմբային: Հերթական ընտրությունները պետք է տեղի ունենային 2019 թվականի հուլիսի 21-ին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ԼԱՐԻՆ ԿՐԿԻՆ ՍԿՍԵՑ ԼՈՂԱԼ...

*Արդեն մեկ շաբաթից ավելի է, ինչ տարադրամի փոխանակման կետերում ականատեսն ենք դառնում ազգային տարադրամի՝ լարիի դանդաղ, սակայն կայուն արժեզրկմանը: Եթե մեկ շաբաթ առաջ մեկ դոլարի համարժեքը լարիով կազմում էր 2,65-2,68, ապա, այսօրվա դրությամբ, այն հասել է մոտ 2,8-ի:*

Ապրիլ ամսին արժեզրկման գործընթացը մի փոքր կայունացել էր, թեպետ մայիսի սկզբիներից այն կրկին իրեն զգացնել տվեց: Նման անկում վերջին անգամ գրանցվել էր 2016 թվականին: Տվյալ պարագայում նշանակալիցն այն է, որ լարիի արժեզրկման միտումը շարունակվում է եւ հայտնի չէ, թե որ նշագծում կանգ կառնի: Նշենք, որ վերջին մեկ ամսում դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքը նվազել է 2,8 տոկոսով, իսկ տարվա ընթացքում՝ 13,6 տոկոսով:

Փորձագետները լարիի հերթական արժեզրկումն առնչում են ներքին եւ արտաքին մի շարք գործոնների հետ: Մասնավորապես նշվում է, որ արժեզրկման վրա բացասական ազդեցություն է գործում օտարերկրյա անմիջական ներդրումների ծավալի նվազեցումը, թեպետ նաեւ նշվում է, որ այդ հանգամանքը կարող է մասնակի, մակերեսային ազդեցություն ունենալ, քանի որ հենց այդ ամիսներին Վրաստանում վավերացվել է զբոսաշրջիկների հոսքի գրեթե աննախադեպ ավելացում: Որպես ազդեցության արտաքին գործոն՝ համարում են նաեւ դոլարի նկատմամբ թուրքական լիրայի նշանակալի արժեզրկումը, ինչը պայմանավորված էր ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի նկատմամբ կիրարկված տնտեսական որոշ պատժամիջոցներով:

Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին լարիի արժեզրկումը պայմանավորում է վերջին տարվա ընթացքում իշխանությունների կողմից իրականացվող ապադոլարիզացման քաղաքականությամբ.

- Անտարակույս, դրանք արտաքին գործոններն են: Պայմանավորող գործոններից մեկը Թուրքիայի գործոնն է: Հենց այդ պատճառով, ավելի քան մեկ տարի մենք խոսում ենք դոլարիզացիայի դեմ պայքարի մասին, որ բնակչությունը դոլարից ավելի քիչ կախված լինի: Խորհրդարանում եւս թեժ բանավեճեր են եղել, երբ պնդում էինք, որ համապատասխան օրինագիծ պետք է ունենալ: Սահմանափակումներ ենք հաստատել հիփոթեքային վարկերի ուղղությամբ, դա ընդունված է հատկապես զարգացող երկրներում,- հայտարարեց Իվանե Մաճավարիանին եւ հավելեց, որ դոլարից կախվածությունը երկրում տարեցտարի կնվազի, սակայն ոչ ամբողջությամբ, քանի որ այն հիմնական պահուստային փոխարժեքն է:




Լարիի արժեզրկումը արտաքին տնտեսական գործոններով է պայմանավորում նաեւ Վրաստանի Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն: Նա եւս լարիի արժեզրկումը կապում է թուրքական լիրայի անկման հետ՝ նշելով, որ Վրաստանը, որպես անհամեմատ ավելի թույլ տնտեսություն ունեցող երկիր, մեծապես կախված է արտասահմանից ապրանքների ներկրումից, ուստիեւ հիմնականում ԱՄՆ դոլարով արտասահմանում գտնվող ապրանքների արժեքը ավելանում է, ինչն հանգեցնում է ազգային տարադրամի արժեզրկման, երկրում գնաճի ավելացման:

Անկախ փորձագետների համոզմամբ, լարիի արժեզրկումը հնարավոր է կարգավորել Վրաստանի Ազգային բանկի եւ պետական համապատասխան գերատեսչությունների առավել ակտիվ ֆինանսական քաղաքականությամբ: Ներկայումս կանխագծումներ են արվում, թե դեռ որքան կշարունակվի արժեզրկումը, եւ որ նշագծի վրա այն կանգ կառնի:

**ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ**

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թբիլիսիի Մթածմինդայի ընտրատարածքում անցկացված խորհրդարանական ընտրություններին թեկնածուներից եւ ոչ մեկին չհաջողվեց հավաքել ընտրողների ձայների կեսից ավելին: Մասնակիցների թվում, «Վրացական երազանքի» թեկնածու Լադո Կախիձեն ստացավ ձայների 41 տոկոսը (6036 ձայն), իսկ «Եվրոպական Վրաստանի» եւ «Ազատ ժողովրդավարների» միասնական թեկնածու Շալվա Շավգուլիձեն արժանացավ ընտրողների 36,83 տոկոսի (5422) աջակցությանը: Այդպիսով, այդ ընտրատարածքում նախատեսվում է ընտրությունների երկրորդ փուլը, որի անցկացման վերջնաժամկետը հունիսի 13-ն է:

Ինչ վերաբերում է չորս մունիցիպալիտետներում քաղաքապետի ընտրություններին, ապա այստեղ հանգուցայինը համարվում էր Զուգդիդիի քաղաքապետի ընտրությունը, որտեղ գլխավոր դիմակայությունը ծավալվեց կառավարող կուսակցության թեկնածու Գիորգի Շենգելիայի եւ «Միասնական ազգային շարժման» կողմից առաջադրված Սանդրա Ռուլովսի՝ Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու կնոջ միջեւ: Ընտրությունների հանրագումարային արդյունքներով, որին մասնակցել է ընտրատարածքում գրանցված ընտրողների 46,88 տոկոսը, Գիորգի Շենգելիան իր օգտին քվեարկողների 54,18 տոկոսով ընտրվեց Զուգդիդիի քաղաքապետ: Սանդրա Ռուլովսի թեկնածությունը պաշտպանեց ընտրություններին մասնակիցների 42,84 տոկոսը:

Կառավարող «Վրացական երազանք» կուսակցության թեկնածուները հաղթեցին նաեւ Մառնեուլիի, Ճիաթուրայի, Զուգդիդիի, Ձեստափոնիի եւ Խուլոյի քաղաքապետերի ընտրություններում: Այսպես, Ձեստափոնիում կառավարող կուսակցության թեկնածու Գիորգի Գոգլիչիձեն ստացավ ընտրություններին մասնակից ընտրողների 50,75 տոկոսը, իսկ «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչ Բաքարի Խաջավաձեն՝ 34,26 տոկոսը, Ճիաթուրայում «Երազանքի» թեկնածու Գիվի Մոդեբաձեն արժանացավ ընտրողների 64,57 տոկոսի աջակցությանը, այն դեպքում, երբ անկախ թեկնածուներ Զուրաբ Կուպատաձեն եւ Դավիթ Ճումբուրիձեն, համապատասխանաբար, ստացան ձայների 17,99 ու 15,26 տոկոսը: Խուլոյի քաղաքապետի մանդատի համար պայքարում կառավարող թիմի թեկնածու Վախթանգ Բերիձեն իր օգտին տված ձայների 70,91 տոկոսով զգալիորեն գերազանցեց «Ազգայինների» թեկնածու Իրակլի Ձորբենաձեին՝ նրա ստացած 23,74 տոկոս ձայներով:

## ԶԱՈՒՐ ԴԱՐԳԱԼԻՆ՝ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Մայիսի 19-ին անցկացված երկրի հինգ մունիցիպալիտետների քաղաքապետերի ընտրություններում, «Վրաստանի» ընթերցողների համար հատուկ հետաքրքրություն էր ներկայացնում Մառնեուլիի քաղաքապետի ընտրությունը:

Նշենք, որ այդ պաշտոնին հավակնում էր 15 թեկնածու: Մեկի բացառությամբ (նա անկուսակցական էր), այդ ընտրություններում իրենց թեկնածուին էին առաջադրել Վրաստանում գործող գրեթե բոլոր փոքրիշատե հայտնի քաղաքական ուժերը (հատկանշական է, որ թեկնածուներից միայն չորսն ունեին նախընտրական ծրագիր), թեպետ հիմնական պայքարը ծավալվեց կառավարող թիմի «Վրացական երազանքի» թեկնածու Զաուր Դարգալու եւ «Ազգայինների» ներկայացուցիչ Ագիլ Մուստաֆաեւի միջեւ:

Հարկ է նշել, որ մայիսի 19-ին անցկացված ընտրություններում ձայների տոկոսային ամենաբարձր ցուցանիշը ապահովվեց Մառնեուլիում, որտեղ Զաուր Դարգալու օգտին վավերացվեց բացառիկ արդյունք. նրա օգտին քվեարկեց ընտրություններին մասնակիցների 78,44 տոկոսը (28 088), այն ժամանակ, երբ նրա հիմնական մրցակից Ագիլ Մուստաֆաեւը կարողացավ ստանալ ընտրողների ընդամենը 11,49 տոկոսի աջակցությունը:

Հատկանշական է, որ Զաուր Դարգալու թեկնածությունը զգալի աջակցության է արժանացել Մառնեուլիի մունիցիպալիտետի հայաբնակ բնակավայրերի բնակիչների կողմից: Այսպես, Դարգալու օգտին քվեարկել է Ախքյորփի գյուղից ընտրություններին մասնակիցների 96,01 տոկոսը, Չանախչի գյուղից՝ 94,54, Գյուլիբաղ գյուղից՝ 92,38, Շահումյանի ավանի բոլոր երեք տեղամասերից՝ 86,66, Դամիա գյուղից՝ 84,59, Կարմիր գյուղից՝ 80,70, Խոժոռնի գյուղից 74,28, Միրզոեւկա գյուղից՝ 60,52 տոկոսը:

Ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո, Զաուր Դարգալին, դիմելով «Վրաստան» թերթի թղթակցին, խնդրեց պարբերականի միջոցով իր շնորհակալությունը հայտնել մունիցիպալիտետի հայաբնակ բնակավայրերի բնակիչներին ցուցաբերած վստահության համար:

Այսպիսով, 31-ամյա Զաուր Դարգալին դարձավ Մառնեուլիի քաղաքապետ:

*ԷԴԳԱՐ ՄԱԶՄԱՆՅԱՆ*
*(մեր թղթակից)*

*Մառնեուլի*

***Մեկնաբանելով մայիսի 19-ին անցկացված տարբեր մակարդակի ընտրությունները՝ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն նշեց, որ Վրաստանում միջանկյալ ընտրությունները կայացել են ժողովրդավարական եւ ազատ միջավայրում, շատ բարձր չափանիշներով:***

***- Ցանկանում եմ շնորհավորել բնակչությանը, Վրաստանում մեկ անգամ եւս բարձր չափանիշներով, ազատ եւ ժողովրդավարական մթնոլորտում անցկացված ընտրությունների կապակցությամբ: Սա մեր թիմի մեծագույն ձեռքբերումն է, քաղաքական ձեռքբերումը: Բոլորը մեկ անգամ եւս տեսան Վրաստանում ժողովրդավարական եւ ազատ մթնոլորտում անցկացված ընտրություններ,- հայտարարեց վարչապետը:***



***31-ամյա Զաուր Դարգալին ավարտել է Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանը, որտեղ յուրացրել է համակարգչային տեխնոլոգիաները եւ ստացել անգլերենի մասնագետի բակալավրի դիպլոմ: Մառնեուլիի Երիտասարդական կենտրոնի զարգացման ծրագրի շրջանակներում, եղել է Եվրասիայի համագործակցության հիմնադրամի կոմիտեի եւ Մառնեուլիի երիտասարդական սակրեբուլոյի անդամ, Մառնեուլիի ժողովրդավարական ներգրավվածության կենտրոնի փոխհամակարգող, USAID–ի կոնստրուկտոր: Իսկ 2013 թվականից ղեկավարել է «Վրացական երազանք» կոալիցիայի երիտասարդական թեւը: 2014 - 2017 թվականներին եղել է Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի ներկայացուցիչը Քվեմո Քարթլիի տարածաշրջանում: Իսկ 2017 թվականից մինչ օրս՝ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում պետական լիազորի տեղակալ:***

***Տիրապետում է վրացերենին, ադրբեջաներենին, թուրքերենին, ռուսերենին եւ անգլերենին:***

***Ամուսնացած է, ունի երկու երեխա:***

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏԵԼԻՍ

## ԻՆՉՊԵՍ ՎՐԱՍՏԱՆԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ՝ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

***Ֆիզիկական անձանց կողմից Վրաստանի պետական սահմանի հատումը թույլատրելի է միայն միջազգային մաքսային անցակետերով: Սահմանը հատելիս՝ ֆիզիկական անձի նկատմամբ իրականացվում են սահմանային եւ մաքսային վերահսկողության ընթացակարգեր:***

### ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

**Վրաստանի քաղաքացի**

* Վրաստանի քաղաքացին, Վրաստան մուտք գործելիս կամ Վրաստանից դուրս գալիս, ներկայացնելու է անձնագիրը կամ Վրաստան վերադառնալու վկայականը կամ անձնագրին փոխարինող այլ ճանապարհային փաստաթուղթ:

* Եթե միջանկյալ կամ վերջնական նշանակման երկիր մուտք գործելու համար այցեգիրը պարտադիր է, այդ դեպքում, լրացուցիչ ներկայացվելու է միջանկյալ երկրի կամ նշանակման երկրի այցեգիրը:

* Մինչեւ 16 տարեկան անչափահասի կամ անգործունակ անձի կողմից Վրաստանի տարածքը ժամանակավորապես թողնելու համար, անձնագրի հետ միասին, պարտադիր կարգով ներկայացվելու է նրա օրինական ներկայացուցիչներից մեկի համաձայնությունը (օրինական ներկայացուցիչը հաստատվելու է ծննդյան վկայականով կամ այլ փաստաթղթով) կամ օրինական ներկայացուցչի նոտարի կողմից հաստատված թույլտվությունը եւ չափահաս անգործունյա անձի համաձայնությունը:

* 16 -18 տարեկան անչափահասը, եթե նա պաշտոնապես ամուսնացած չէ, ժամանակավորապես Վրաստանի տարածքից դուրս գալու համար, անձնագրի հետ միասին, ներկայացնելու է իր օրինական ներկայացուցիչներից մեկի թույլտվությունը՝ հաստատված նոտարի կողմից:

**Օտարերկրյա քաղաքացի**

* Օտարերկրացի քաղաքացին, սահմանը հատելիս, պետք է ներկայացնի անձնագիր կամ, դրա փոխարեն, ճանապարհային այլ փաստաթուղթ:




* Անհրաժեշտության դեպքում, Վրաստանում գտնվելու թույլտվությունը Վրաստանի այցեգիրը կամ կեցության վկայականն ու Վրաստանում փախստականի կամ հումանիտար կարգավիճակ ունեցող անձի ժամանակավոր կեցության վկայականը:

**Ի գիտություն օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց**

Վրաստանում օրինական գտնվելու ժամկետի սպառման օրից, Վրաստանում գտնվելու դեպքում, նախատեսված են հետեւյալ պատժամիջոցները.

* մինչեւ երեք ամիս գտնվելու դեպքում՝ 180 լարի,

* երեք ամսից ավելի գտնվելու դեպքում՝ 360 լարի:

**Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԱՐՈՐԴԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ.**

* ավտոտրանսպորտային միջոցը վարելու վկայականը,

* տրանսպորտային միջոցի գրանցման փաստաթուղթը,

* տրանսպորտային միջոցի՝ օրինական սեփականությունը հաստատող փաստաթուղթը (եթե վերոնշյալ հանգամանքը չի հաստատվում տրանսպորտային միջոցի գրանցման փաստաթղթով):

**ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ.**

* ավտոբուսով ուղեւորների միջազգային պարբերական փոխադրման ավտորիզացիան,

* գործընկեր երկրների իրավասու մարմինների կողմից հաստատված ավտոտրանսպորտային միջոցի երթեւեկության սահմանված սակագինը, երթուղու սխեման,

* ուղեւորափոխադրողի կողմից տրանսպորտային միջոցի օրինական սեփականությունը հաստատող փաստաթուղթը,

* ուղեւորափոխադրողի հետ վարորդի աշխատանքային պայմանագիրը հաստատող փաստաթուղթը,

* ուղեւորների գրանցման տոմսակը, բացառությամբ՝ դատարկ տրանսպորտային միջոցների փոխադրման դեպքերի:

**ՈՉ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ.**

* միջազգային ոչ պարբերական ավտոտրանսպորտով ուղեւորափոխադրման ավտորիզացիան,

* ուղեւորափոխադրողի կողմից տրանսպորտային միջոցի օրինական սեփականությունը հաստատող փաստաթուղթը,

* ուղեւորափոխադրողի հետ վարորդի աշխատանքային պայմանագիրը հաստատող փաստաթուղթը:

(Շարունակելի)

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ